470 Մինչև ի տաւն Սըրբոյ խաչին
Ծանր զաւրաւք պաշարեցին.
Բայց վընասել ոչ կարացին:
Ապա յետոյ դարձ արարին
Յաշխարհն իւրեանց ուստի եկին։
475 Դարձեալ կրկին ի դուրս եկին
Ի քառասուն և՛ երկու ամին
Ի Բաբելոն արշաւեցին
Ի՛ ի Միջագետս կոխեցին։
ԶՈւրհա քաղաքըն պանծալին
480 Եւ ըզԱմիթ երևելին,
ԶՄերտին ամուր և զՆըսեբին—
Զորս բնաջինջ գերեցուցին:
Եւ զայլ բազում քաղաքանին,
Զորս քանդեցին, աւերեցին:
485 Անտի դարձան յաշխարհս վերին
Մինչև յԱւնիկ արշաւեցին,
Զոր և Ջանիւ մեծաւ առին։

---

176. Այսինքն Հայոց 842. թուին=1393. Թ. Մեծոփեցին (էջ 44) 844=1395 թուականին է դնում Լանկ Թամուրի երկրորդ արշաւանքը:

181. Նըսեբին=Մծբին:

184. Փիղոպեմ. օր.—«Զորս քանդեցին և գերեցին»: